

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԹՈՐՕՏՅԱՆ

Նամակ կամ որևէ

պրուսթիւն մեքսիկոս և ռուսիայի

Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ ԳՐԱԳՐԻ ԳԱԶԻՐԷ (Նախախառնի)

Թիւ


E. TOROSSIAN

Dirac. propr. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԳՐԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ծրանք	20
Վեցամսեայ »	12

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՒԿ ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ԺԱԽՔԸ ԽՆԻՔԱԳՐԱՔԵԱՆԱ ՎՐԱՅ Է:

ԽՆԻՔԱԳՐԱՔԵԱՆԱ ՈՂՂՈՒՄ ԳՐԱՔՐԱՆԿ ԵՍ Հ'ԵՆ ՏՐԱԽՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԻՔԻ ՎՃԱՐՆԻ ԵՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻՆ ՅՈՒՐՁԸ

Մարդը մի՛ գատէք իր անձնական գործէն, այլ գատեցէք հանրային գործերէն: Ազնիւր, առաքինին, իրաւարարը, չ'կրնար իր սրտին կամ հոգւոյն շնորհներովը դուրս գալ իւր գործոցը մէջ ա՛յնքան, որքան աւելի հանրութեան պատկանող գործոց ու ստպարէզին մէջ:

Հանրային գործք աւելի հայելի մ'է ո՛ր և է մէկու մը արժանիքին, սրտին մաքրութեանը և զգացածներուն ամենաբնական եզանակին: Սակայն պէտքը չէ մոռնալ թէ՛ Վան մարդիկ ալ որոնց զգացածին պալ ու աննշող ազդեցութիւնը ուր և է գրգիւ ու բորբոքում չ'յարուցաներ, իրենց ինք մարդ ստեղծուած ըլլալու ժանիքին ու կոչմանը գէ՛մ: Եւ այսպիսիք իբր օրինակ չեն կրնար ծառայել աւելի ուրիշներուն, որոնք որքան կը ճանչնան խղճահարութիւնը, այնքան և կարող կը լինին գիտնալ պատիւը, արժանիքը և վերաւորանքը իրենց հաղորդակցութեանց և շիւտմին մէջ:

Ընդհանրապէս մեր բարոյական կարողութեան ու արժանիքին չափ մը, սահման մը գնելու համար՝ մենք բաղդաւոր ենք օրինակը ուրիշ սեպերէ չի փնտռելու:

Մենք մեր օրինակներուն և մեր օրինակները միշտ մեզի բաւարար են: Առնենք մեր ընկերութիւնները, որոց մէջ այժմ մեր ուշը կը գրաւէ « Բարեգործական » լաւահամբաւ ընկերութիւնը:

Անցեալ անգամ արշալոյսի այս էջերուն մէջ առաջին անգամ ըլլալով, Բարեգործականին վրայ գրած առեւտ, լոկ նպատակ ունեցած էի մեր ընթերցողներուն ըսել թէ՛ բուն բարեգործութիւնը պէտք է փնտռել իրականին մէջ, ոչ թէ անուանականին, սակայն անկէ յետոյ միեւնոյն բարեգործականին մէջ յերևան եկան այնպիսի ինքիքներ, որ ահա կրկին աւելի մը կ'ընծայեն ինձ պահ մը աննշող զբաղելու:

Արշալոյսի ընթերցողները 'ի հարկէ կարգացին Բաց նախկին Բարեգործ. Ընկ. վարչական ժողովոյ մէջ անգամին ուղղուած: Որովհետեւ այդ նամակը կարգացողը, առանց նախապէս եղածներուն տեղեկութիւնը ունենալու չէ՛ կարող բան մը հասկընալ, ինչպէս որ մէկէն 'ի մէկ ես ալ չէի հասկցած: Բարեգործականի ինք

րոց իբր երգուեալ հետաքրքիր պիտի պատմեմ՝ ահա բուն եղելութիւնը, սպասելով մեր հանրային վճռոյն ու գատաստանին:

Բարեգործ. Ընկերութեան ժողովոց պաշտօնավարութիւնը լրացած ըլլալուն, ըստ սովորութեան Ընդհ. ժողովոյ գումարումը կը ծանուցուէր այն ինչ օրը առանձին նամակներով, օրակարգ ներկայացնելով Համարատուութիւն և Տեղեկագրի ընթերցում:

Երբ Ընդհ. ժողովը կը գումարուէր 18 ներկայ ընկերներով, կենսական ամենալուրջ ինքիքներ վճռուած և ընդունուած էին առանձին յօդուածներու արձագրութիւններով:

11 թգ. Յօդուածը եղած էր, նոր վարչութեան ընտրութեան ինքիքը. որուն համար ընդհ. ժողովոյ գիւմնի անաչառ և հեզահամար Ս. Ատենապետը. Տիար Մկրտիչ Պալքեան, փափաք յայտնած էր ընտրողական մասնախումբ մը կազմել, փոխանակ ըստ կանոնագրի՝ գիւմնին կատարել տալու այդ գործողութիւնը: Ժողովը ընդունելով իր Ատենապետի առաջարկը, ներկայք կը ընտրեն իրենց մէջէն երեք անձնաւորութիւններ ճիշտ ու ճիշտ հետեւեալ արձանագրութիւնը ընելով:

«Յօդ. 11 թգ. Ընտրութեան - Մասնախումբ կազմուեցաւ հետեւեալներէն. Մեծ. Տիարք. Առաքել Պէրպէրեան. Ագրիպպաս Եղուպեան և Գրիգոր Գմբեան. պարտական են քուէարկութեան գործողութեանց հոկէլ »:

Ժողովը կը փակուի. յորմէ մէկ օր վերջ Բարեգործ. ի յարգելի գրագիրը, հմուտ ու փորձաւոր իր պաշտօնին՝ մասնաւոր գիւմնումով մը կը հասկնայ Ատենապետին կամքը, և անկէ ստացած հրամանին՝ վրայ կը դիմէ Ընտրողական մասնախումբին իր հետ ունենալով պատրաստուած հրաւիրագրերն և անոնց ցանկը: Ընտրողական մասնախումբը անկէ յետոյ կը ձեռնարկէ իր պաշտօնին. քուէտուփի պատրաստութեանց և նամակներն ստորագրելէ յետոյ, զանոնք իրենց հասցէներուն զրկելու:

Հոտ կը փրթի ահա ապուկը, խուլ հակաակութիւն մը ընտրողական մասնախումբին գէ՛մ. նախանձը կը յօշոտէ սրտերը. սրտակ մը կ'զգացուի բառերը և անոնց իմաստները խեղաթիւրելու, որոց փոխիկ հեղինակը ինքիքները ձեռնհաս կը կարծէ իրմէ ու իր վարպետէն շատ աւելի արժանաւոր ու հմուտ անձանց ունեցած վարչա-

կան կարողութիւնները ստնակոխելու և արդարեւ իր նպատակին մէջ յաջողած պէտք էր համարել, վասնզի ընտրողական մասնախումբին պահանջած քուէները եկած և մերժուած էր, ծանուցուելով թէ՛ նոր նամակներ և քուէթղթեր պիտի զրկուին: Բայց նախ քան այդ հրաւերագրերը, ընտրողական մասնախումբին բան մը ընել հարկ էր. բան մը՝ որ ըլլայ վերաւորիչ, անարդիչ, գրեթէ անվայել լեզուով մը: Ահա այդ նամակն էր որուն տակ ստորագրուց անձնաւորութեանց կ'ուղղուէր «Արշալոյս» ի մէջ երեցած բաց նամակը: Ուրեմն մենք իբր անաչառ ու անկողմնակալ անձինք, ինչպէս պիտի վճռենք ինքիք մը՝ որուն սկզբնաւորութենէն կ'երկայթէ՛ գուցէ համար միւշե գատաստանին դռներն:

Իմ փափաքս է այս առթիւ լսելու իմանալ հանրային գատաստանը, որուն եղբակացութիւնը դարձեալ Արշալոյսի խօսուն տառերուն պիտի նուիրեմ:

Բայց ամենէն վերջը պիտի գայ իմ կարծիքս, որուն պիտի միացնեմ Բրեգործ, Ընկ. Ընդհ. ժողովոյն վճռած մի կենսական ինքիքը, որ ի գործ դրուելէ առաջ վարչական խղճամիտ և արդարասէր անձինք ժողովէն արգէն հրաժարած են ու հետզհետէ կը հրաժարին:

Ինչ պիտի ըլլայ ուրեմն Բարեգործ. Ընկերութեան ապագայն. զո՞հը, անտարակոյս զո՞հը կը քին ու ետութեան, որուն մուրը կը ցատկէ յաճախ պատուաւոր, արժանի ու ամեն բարեմասնութիւններով օժտեալ անձանց վրայ:

Բայց նետուած քարը իր նպատակին կը հասնի. երբէք արժանաւոր ճիւղերը ծանօթ ու յայտնի բարձրութենէ շատ աւելի վեր են կրքի ու ետութեան սեէն, որուն մատակարարները լեզապատառ կը փախին, երբ ուղղութեան և ճշմարտութեան ճառագայթները շեշտակի կը թափանցեն իրենց աչքերուն մէջ . . . :

Պէտք է ամեն անհատ ամեն անձնաւորութիւն անխիղճ չ'գտնուի զէպի հաստատութիւն մը, որուն գոյութիւնը մեր ամենուս պարծանքը կ'ըլլայ օտարաց առջեւ. այսպիսի հաստատութեան մը գահավիժումը իհարկէ լաւ տեղ մը չ'պիտի բանայ անոր պատճառներուն անուանց համար. փափաքելի է որ աւելի հաստատութիւնը խնայուի, քան փայփայուի ևս ու դռնը, որուն ու ազդեցութեամբը կործանած են մեր բոլոր հաւաքական ուժերով կազմուած հաստատութիւնները:

ՄԷՎԼԱՎԻ

ՈՒՆԻՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

Հարցում ընդ ահա, որ սակայն Գահիրէի հայ երիտասարդութեան ապագայ տարեգրութեան մէջ եզական սեւ էջ ընդ գրաւելու հանգստանքն ունի. ներքին պիտի լինի ի հարկէ եթէ մի քիչ զբաղուինք այս խիստ կենսական եւ շահեկան երող խնդրով:

Հաւաքական ձեռնարկ ընդ կայ. Երիտասարդաց կողմէ կը պտտայ մէկը: Գործնական յոտովութիւններով եւ ձիւրքերով օժտուած տարբեր ունինք կը բացագանչէ երկրորդ ընդ: Յետադիմականներու զօրաւիգ պիտի ըլլան անոնք. եւ մենք աղայ ին գերը պիտի նուազեցնեն կը յոխորտայ ուրիշ ընդ:

Եւ ո՞վքեր են սակայն դէպի վերածնութիւն առաջնորդող այդ նշանաւոր զարմերը:

Գահիրէի հայ երիտասարդութիւնն է եղբեր. լոկ բառ մը միայն՝ եթէրէն աւելի ցնդական: Անին գործի մէջ հայ երիտասարդութեան անիմանալի զօրութեան վատը կայ. աներեւոյթ էակներու նետ միայն կ'ապրի նա, բայց միշտ վերին հակող է գարուստ Սփինքսի հպատակ հայ մանկանացունքու գործառնութեանց. հաւաքական ասոր. դի « յ'աւուր միտջ ստնիցէ վարմին, հոգի եւ զմիտս եւ զ'ստննայն որ ինչ է ի մարդ ճշմարտապէս, եւ ոչ կարծեօք»:

Շահեկանութեան զուրկ չը լինիր կարծենք, երբ յատկօրէն պատկերացնենք միւրիայն շարք ընդ տեսանելիներու գործունէութիւնը:

Ձէ կարելի մեր ուշադրութեան վերաբերել 1896 ի գաղթականութեան հոսանքը, որ Եգիպտոս բերաւ երիտասարդաց ստուար մեծատեսութիւն մը. աչքի առաջ ունենալով՝ աստնց մինչ ց'արդ ցոյց տուած գործունէութիւնը, կարելի պիտի ըլլայ գտնուի չորս գասակարգի բաժնետէլով՝ եւ անցողակի յիշատակութեամբ ընդ իւրաքանչիւրին գործունէութեան եղանակը եւ նկարագիրները մի առ մի գծելով՝ յարգոյ ընթերցողաց ներկայացնել:

Առաջին գասակարգին պատկանող երիտասարդները, տեղւոյն մէջ շատ աւելի անհրաժեշտ պէտքը զգացին զարգացման միջոցներու. հայ-գտնասիրութեան նուազեցումն արիւնք ստուար գտնայ Գահիրէի ազգայնոց երակներուն մէջ. ուզեցին մղուի ներշնչել դէպի այդ թմբած զանգուածին: Ուստի իրենց ֆէք-ա-ֆուրջին եւ զաւ յեղափոխական այսինչ կամ այն ինչ կուսակցութեան մասնակցի, եւ իրենց բովանդակ թանկագին ճիգերը թափելով յանուն իրենց պատկանած կուսակցութեան նիւթական եւ բարոյական ոյժ ընդ գոյացնել:

Մայր երկրէն հեռու օտար հորիզոններու տակ փայլել, գաղափարային վարդեր ըլլալ, ու թերեւս մէկ մէկ գործիչներ ըլլալ տենջացին . . .

Եգիպտոսը ազատ գործունէութեան դաշտ մը գտան, պէտք էր ընկալել եւ միանգամայն ջանալ, որպէսզի աւերակ ընդ չի գտնայ կը մտածէին: Ուրեմն ստեն ընդ աշխատեցան, որպէս զի հաւակիրներուն թիւը ըստ կարելոյն ստուարացնեն եւ փոխանակ միանամուս, սիրով եւ հավերժականութեամբ ասպարէզ նետուելու, ընդհանրական սկսան մեկզմեկու գործերը հարուածել . . .

Ոչ այնքան զօրեղ բանակներ սկսաւ սնունջը քաշքուսներուն, սանձարձակ յարձակումներու շարք ընդ յաջորդեց:

Կարծես բաւական էր բոլոր այս ընդհատ յորձանքները, յանկարծ Ալեքսանդրիայէն արտամարէկ ձայն մը. դիպի Պոլիս կը պտտար, ուրիշ ընդ արտասանման. երբորդ մը հայրենիքէն մը միայն կը պակէք, որպէսզի Բաբելոն հրաւիրէր սոյն ժամանակակից կարիպայիները:

Երբայրասպան կոիւնքու գաշտը լստիրութիւնտի մը գարձուցած էր չըջանականը. ալ այսուհետեւ մասնաւորներու է'եր պատկանէր այդ վայրը, մուտքը ազատ էր, իսկ սպորդներուն թիւը անթիւ:

Յեղափոխութիւնը սկսաւ վայրապար քըննադատուել, հակակրակական վարձուքը ընդ, կամ

աւելի ճիշտ վատ վերաբերուի ընդ դէպի յեղափոխական տարբեր . . .

Այն ատեն Պղատոնական երկչոտութեամբ ընդ, տեղեկութիւն եղանակաւ. տունը ոք իւր տեղը քաշուեցաւ որովհետեւ այսքան քրտնախոր եւ անխոնջ աշխատութեան ընդ յետոյ ժամանակաւոր գաղաթիւն ընդ պէտքը զգալի եղած էր:

Կոռն ուրբո . . .
Երկրորդ գասակարգին պատկանողները, սրճարանի հետտոնքեր եղան. Ասոնք ազգային գոյութեան խարխիւր սրճարաններու մէջ գտան իւր խոր պարտաճանաչ զգացումներով սոգորուած, դարտակ վէճերով, սնտոթի վիճարանութիւններով, ազգային գործերը ընդարձարձ ու կենդանի դրութեան ընդ մէջ պահել ջանացին. անողք եւ անտանելի յարձակումներով ասոր անոր գործերը քննադատեցին, ներկայ կացութեան փրկարար գեր ընդ խաղացած ըլլալու աւնուրջով, առաջին գասակարգին պատկանողները ծաղրանքի տիրելով ծեփել ուզեցին, օրերով աւերակներով, առանց ու եւ օգտակարութիւն մը ցոյց ապրու համբաւի ու տաղանդի փթիթուելին մէջ տապալակեցան:

Երբորդ գասակարգը անտարբեր ու սկեպտիկ տարբեր կը կազմէր. Կարելի չ'եղաւ պահել իրենց յուստնական ու միանգամայն դատասպարտելի թիւրբէն սթափեցնել. ոչ մի շարժում ոչ մի գործ չի հետաքրքրեց զիրենք. տունը մտելու անհրաժեշտ սթափեցնել. Ծիչալներու երկրին սեփական անաւանքի պատուանշանը կուծքերնին կախած, առնն իսակուումէջ կը մտնէին ու կ'ելլէին, ոչ ոք երեսնց մտնալու յանդուութիւնը կուսենար:

Հայրենիքի փրկութեան միջոցները ցորեկները կանաչ չուխայով ծածկուած սեղանին շուրջն, իսկ երեկոյնները մասիֆայի քիքսին մէջ փնտոնցին. չի ներշնչուեցան երբէք այն բարեբար առթիւն, որ օր քան զօր իրենց սնձնասիրութիւնը կը վերաւորուէր:

Իսկ չորրորդ գասակարգին (բացը մնացող եւ միանգամայն պաշտօնի ցանկացողները) գործը եղաւ, առանց ու եւ գրաւելու եւ որոշ ուղղութեան խափանարար ընթացք ընդ բունիւրի ընդ մէկը միւրին դէմ գիտնելով, իրենց սեղեկ կիրքերը վատ պահելու եւ այսինչ աղային հաճելի ըլլալու բուռն փափաքով, սկսան խառնակչութեան, շահախնդրութեան, ու շատ սնձալ ալ ուրացումներու տունաստորին ու անարգ արուեստը ի գործ դնել . . .

Երկուային մարզանքներով իրենց դաղափարները պաշտպանել կը ջանային, իրենց գրաւազուելը, երկայնի լիզու գործածելը եղաւ:

Այս ինչ կամ այն ինչ ընկերութեան հաւար, այս տեղ գոնարանութեան ալիւթախաներ կը կարգային. միւրիցեւ քիչ ընդ տողին ցաւկոտ լուստանքներ կը տեղացնէին . . .

Ինչպէս կը տեսնէք վերոյիշեալ չորս գասակարգի պատկանողներն ալ իրենց առանձին առանձին զերերն ունեցած են, առանց սակայն ոչ մի օգտակար արդիւնք ցոյց տալու:

Եթէ ցաւալի կէտ ընդ կայ. այն ալ սա է թէ՛ պատուաւոր չէզոքութիւնն ունեցող տնձնաւորութիւններ շատ քիչ, կամ լաւ է ըսել երբէք չ'ունեցանք, որովհետեւ երբ նկատին ունենանք սոյն գործողներուն անհաճ ու անպատուաբար գործունէութիւնը. որ հանրութեան ընդքերը պղտորելէ եւ աղային շահերը վտանգելէ գաս ոչ մի հանգամանք ունի. այն ատեն հեւտեւալ որոշ եղբակացութեան պէտք է յանդիք թէ՛ ճշմարիտ յեղափոխականները անկեղծ ու անփառուական հայրենասիրները այդ պատուաւոր չեղածներն են եղեր: (իրաւ է արգեօք):

Արդարեւ չորրորդ գասակարգին պատկանող շարք ընդ անհատներ գտնուեցան, որոնք չեղբի եւ ողջմտութեան զիւնակին տակ ասպին անդին պատեղով նախձիւններ գործեցին, ասոնք աւելուրիշ միբրոպներ եղան:

Եւ եթէ աւելի ցաւալին կայ այն ալ սա է թէ՛, չ'ունեցանք երբէք երիտասարդաց միութիւն մը որ կրթական գործին բարեխղճօրէն սատարելու միակ առաջնորդն հանդիսանար:

Եգիպտոս որ բաղադատուեր ուրիշ արտասանական երկիրներու. ճոխութեան եւ հարբատութեան տեսակէտով աւելի նախանձելի վիճակ մ'ունի եւ ուր հայութեան ստուար մեծամասնութիւն ընդ կայ այժմ, ինչո՞ւ սակայն յետագիւնութեան նշաններ ցոյց տայ, քանի որ կըրթական զգալի բարեշնչման ընդ գործը տունն սարակոյսէ գեր ի վեր նկատուած է: Նոր ուղիի ընդ մէջ մտնելու անհրաժեշտ պէտքը ո՞չ թէ հիւնայ այլ ժամանակէ ընդ ի վեր ունինք. ուրեմն պէտք է սէր ու խանդ ունենանք ազգին իրական բարեքներ մատուցանելու գործին մէջ, տեղւոյն հայ գաղութին մատուցական զարգացման սատարներ բարձրացնելու միջոցներ գրանենք. ինչ որ չեն պակսիր:

Այս ախտաւոր երեւոյթը շարաչուք ու արգահատելի է. կրթական գործին պէտք է ոյժ տալ կիրակնօրեայ դաստիարակութիւններ սանտանել. բան ընդ որ ժողովրդին մասաւոր շարժման փաստ մ'է, Բնթեցատուն ընդ բանալ գոնէ շաւարթ մէկ անգամ Լսարան ունենալ. հոգ չ'է խնդիր չ'է թէ շրջուն եւ կամ քառաշաւ է եղեր արդ տրտաղբելի ընթերցատուն կամ լսարանը վերջապէս պէտք է հոգ ստանի այն բոլոր ձեւնարկներուն ինչ որ ժողովրդին միտքը մարդու ընդ մշակելու. դատարարակելու ինչպէս նաեւ հայ երիտասարդութեան ապագայ տարեգրութեան մէջ թուական ընդ արձանագրելու հանգամանքն ունենայ:

Արդարեւ գաղթականութիւնը մեծ հանձարներ ու տաղանդներ ներկայացուց, որոնք ուրիշ հարիզոններու տակ փայլեցան. սակայն ցաւալի է ըսել թէ Գահիրէ թերեւս զրկուի անկէ:

Եգիպտոս ալ այսուհետեւ ընդ խախտած հարազատները վերահաստատուին, որով քիչ ժամանակէն մենք ալ ըստնք թէ ունինք մեր երիտասարդութիւնը:

ՆԵՎՐՈՒՋ

ԲԱՑ ՆԱՄԱԿ
ԱՌ ԼՍԱՐԱՆ - ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ազգ. օրինաց մեծաւորն՝ մեր երջանկայիչատակ Սահմանադրութիւն կ' Պոլսոյ իւր օրինաց վերնագոյն տեղւոյն մէջ զտեղեց ՊԱՏԺԻԵՐԻՆԻՔԻ քառերը, որպէս երկու գուգահեռական գծերն երկաթուղւոյն, որոց վրայէն կը սահի նպատակը կամ կիրագործուի. եւ մեք կարողացանք իմանալ որ առանց պարտուց իրաւունք չ'կայ եւ ոչ առանց իրաւունց պարտը:

Այսպէս ըրին եւ բոլոր ընկերային ձեւնարկութիւնք, որպէս ը Լսարան - Ընթերցատուն ընկերութիւնք, փոխան մի շարաթական որոշ գուգարի վճարման, իրաւունք տուին իւր անդաւոց ձրի լսել բացուելիք Ընթերցատան մէջ բանասիրութիւններ, ձուեր, իւր մաստասիրութիւններ եւ այլն եւ այլն. բայց որովհետեւ այդ բացուելիք ընթերցատունը միշտ ԲԱՑՈՒՆԵԼԻՔԻ մնաց, երեւի զժուարթութեան կամ տեղւոյն չեզոքութեան պատճառաւ, ուստի բաժնեկէտ ընող անձանց զրկուի մը չընկուի հաւար, որոչեց ԵՐՁՈՒՆ ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆԻ գրութիւնը մը հաստատուել (ի՞նչ, ասին նորութեան Ամերիկայէն պիտի գայ) եւ հրատարակեց ընդ օրը երեքօրեայ թերթը (շարաթը երկու անգամ) եւ սկսաւ ցրուել զայն բաժանորդաց եւ այլոց:

Այժմ կը փափաքիմ գիտնալ թէ՛ ինչպէս տեսնք ըսին, իրաւ է որ Լսարանի բաժնեկէտ անդաւր՝ որք իրաւունք ունէին Լսարանէն օգտուելու, որուն վճարած են ու կը վճարեն, պէտք է եղեր թերթին (Նոր-Օր) ի ալ վճարեն: Եթէ այս, շատ ուղիղ չէ այդ վճարումն, քանի որ թերթին ըստ յայտարարութեան Լսարան Ընդ. Երջումն Լսարան մ'է. իսկ թէ ոչ, հապայինո՞ւ Նոր-Օր ի վերջին թիւը չի զրկուեցաւ ինձ. որպէս իւր նախորդները զրկուած էին: Խնդրեմ խոնարարար Լս. Ընդ. Պատ. Վարչութեան որ հաճին առ այս երկու խօսքով պատասխան ընդ շնորհել ի գիտութիւն բաժանորդաց:

Լսարանի կողմից պաշտպանութիւն չստանալու և արձակուրդի մտադրութիւն չունենալու () որուն ի սրտէ բաղձացող միամտ անձկանօք:

Գահիրէ 16 Յունիս 1900.

ՄԱՐԳԱՐ ԳԱԼՏԱՆԻ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բ. ԽՏԻՎԸ. — Տէրի Մէջի և Միացեալ թագաւորութեան թերթերը, ինչպէս նաև ուրիշներ բազմաթիւ հեռագիրներ հրատարակեցին, որոնցմով կը ծանուցանէին թէ՛ Խտիվը Լոնտոն երթալէ առաջ Պոլիս հրատարակած է Սուլթանին կողմէ:

Միևնոյն օրագիրները կը յայտարարեն թէ՛ Ն. Բ. Խտիվը իւր ծրագրած ուղեգրի ծրարեփոխելու նպատակ չ'ունի:

ԱՐԱՊԻ ՓԱՇԱ. — Տէրի էփարեսի թղթակիրը Գոյումպոյէն Մայիս 19 թուականաւ կը գրէ:

Գանտիէն կուգամ, Սէյլանի պարտէզը, ուր Արապի փաշային հետ շատ շահեկան տեսակցութիւն մը ունեցայ. որ ինչպէս ծանօթ է 1882 Յունուարէն ի վերայ շաքարաքին մէջ աքսորուած է:

Կայսերական կառավարութեան կողմէ իրեն եղած շնորհէն, բացարձակապէս կը մերժէ օգտուիլ:

Ե իմ վերջին օրերս երկրիս մէջ անցնելու թոյլտուութիւնը տուին ինձ, կըսէ, բայց կը նախնարեմ հոս աքսորի մէջ մեռնիլ, քան վերադառնալ Եգիպտոս, ուր իմ հայրենակիցներս կ'անդիտանան այն շարժառիթներն որոնցմով ներշնչուեցայ 18 տարիներ առաջ:

Իմ հին բարեկամներէս շատերը զիս մասնիկ կը կոչեն և կըսեն թէ՛ 1882 ի եղելութիւնները ես էի ստեղծողը Անգլիոյ թեղադրութեամբ, որուն իբր թէ երկրին անձնատուութիւնը խօստացած ըլլամ:

Կասկածելի ըլլալը ինձ աւելի տաժաւեղի է քան թէ աքսորը: Հոս մնալ կուզեմ: Ամեն օր կրնան տեսնել Ահմէտ Արապին, իւր զաւակը, և երկու աքսորի ընկերները, որոնք իրենց սովորական պառայը կընեն Գանտիի վերջին թագաւորին պեղած լճին եզերքը:

Աքսորեալը սոսկալի կերպով ծերացած է. այսու հանդերձ Եգիպտոսը նորէն տեսնելու յոյսը չէ կորսնցուցած:

Թերթը մամուլի յանձնուելու պահուն, Արքայի Բնկերութեան գիւանի Ատենապար Ը. Ս. Բիւրատէ նամակ մը ստացանք, որով կը խնդրէ ծանուցանել թէ՛ վաղը Արքայի Բնկերութեան ընդհ. Ժողովը պիտի գումարի Մեծ. Տիար Առաքել Պէրպէրեանի բնակարանին մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ս

ՉՕՐԱՎԱՐ ՊՕԹԱ. — Իրէթօրիայի Տիկնանց նուիրած Դրոշակը՝ որուն կ'ընկերանար նաև ուղեք մը, զօրավարը ընդունած պահուն, հետևեալ խօսքերը արտասանած է:

«Գանի որ հազարաւոր մարդոց բարի կամեցողութեան վրայ պիտի կարենանք

վստահիլ, պէտք չ'է որ հրաժարինք ո՛չ պատերազմիչէ և ո՛չ ալ մեր անկախութենէն»:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Կ. ՊՈԼՍՈՅ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ. — Բ. Դրան Նոթա մը ուղղեցին, որով կը բողոքեն օտար հպատակներու պատկանող անշարժ կալուածներու մասին ձեռք առնուած խիստ միջոցներուն և նամակագրոյցներու վրայ գրուած իրաւունքին դէմ. ապոնք կայսերական հրովարտակներու և դաշնագրութեանց հակառակ են կ'ըսեն:

— Յունական գեսպանատունը Բ. Դրան Նոթա մը ուղղեց յայտարարելով թէ՛ վաճառականական պայմանագրութեանց վերաբերեալ թրքական ծրագիրը կարելի չ'է վիճարանութեան դնել:

— Հայոց Պատրիարքը, Օրմանեան, Երևտըզ կանչուած է, ուր իրեն տեղեկացուցած են թէ՛ Մայիս 24 ին եղած շիջումներուն մէջ քանի մը փոփոխութիւններ ներմուծուած են:

Պատրիարքը շատ դժգոհ է և անհաւանական չէ որ նորէն հրաժարի, եթէ կատարեալ գոհացում չ'ընդունի և եթէ Սուլթանին խօստումները օրինաւորապէս չ'գործագրուին:

Ի Տ Ա Լ Ի Ա

— Նահանգային շատ մը թերթեր, ընտրութեանց արդիւնքները նախարարութեան աննպաստ կը համարին:

Անոնց համար համեմատական քուէարկութիւնը կացութիւնը երբէք չ'պիտի փոխէ. կը կարծ են թէ՛ այս պայմաններու մէջ շատ նժուար պիտի ըլլայ ֆէլլուի դահլիճին, խորհրդարանին առջև ներկայանալու:

Թէպէտև նախարարական փոփոխութեան մը լուրերը հերքուած են. սակայն անկողմնակալ անձեր կը յայտարարեն թէ՛ դահլիճին կացութիւնը անհաստատ է:

Առանց խորհրդարանական կացութեանը քննութիւնովը զբաղելու, պէտքէ գիտնալ թէ՛ կարելի պիտի ըլլայ ազգեցիկ երեսփոխան մը գտնել ժողովոյ նախագահութիւնը ընդունող յայտարարուած կանոնագիրը գործագրելու համար, որովհետև սահմանագրութեան հակառակ է այդ:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

— Յունաստանի Արքայական իշխանը Բոցտամի զօրահանգէսին մասնակցեցաւ: Անձնապահ հետևակազօրներու համազգեստը կը կրէր:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 12 Յունիս. — Զօրավար Պուլլըր իր բանակը Վօլգորութի հիւսիսային կողմը հաստատած է:

Պօէրները պարպեցին Լէնկա-Նէզը: Լոնտոն 12 Յունիս. — Յունիս 6 էն ի վեր ո՛չ Լորտ Ռօպըրթսէն և ո՛չ Մէթուընէն լուր առնուած է:

Թերթերուն հրատարակած հեռագրին նայելով, Զօրավար Վէթ 13 հազար Պօէրներով Օհաննէսպուրի վրայ կը քալէ:

Պէրլին 12 Յունիս Ռայստաղ կը նաւտորմիղի շինութեան ծրագիրը վերջապէս քուէարկեց:

Լոնտոն 13 Յունիս. — Լորտ Ռօպըրթս

կը հեռագրէ թէ՛ Ռենսսթրը Ռիվըրի վրայ զօրավար Մէթուըն զարկաւ և ցրուեց զօրավար ար Վէթի զինուորները:

Երկուշաբթի ձրէնչ և Համիլթըն զօրավարները յարձակեցան զօրավար Պօթայի վրայ, որ ամրացած էր Բրէթորիայի արեւելեան կողմը 15 մղոն հեռու:

Արևը մարը մտած ժամանակ Պօէր յառաջապահները գրաւած էին:

Կոմս Դրըլի և երկու սպաներ սպաննուած են:

Լոնտոն 13 Յունիս. — Թայնզ կը տեղեկանայ ֆէլլին թէ Մայր Կայսրուհւոյն անձնապահ զօրքերը ձաբոնական հիւպատոսարանին գիւանապետը սպաննած են:

Լոնտոն 14 Յունիս. — Զօրավար Պօթա գեղեր ատեն հարաւային կողմը գնաց: Թեէն-Չին 14 Յունիս. — Երկաթուղին նորոգելու պաշտօն ունեցող Եւրոպական զինուորները դեռ ֆէլլին չ'են հասած:

Լոնտոն 14 Յունիս. — Տիկին Կլատըթոն. ազատական պետական մեծ մարդուն որբեայրին, մեռաւ:

Լոնտոն 15 Յունիս. — Երեսփոխանական ժողովոյ մէջ Պ. Պրօտրիգ երկար տեսութիւն մը ըրաւ: Չինաստանի մէջ տեղի ունեցած դէպքերուն վրայ: Հանդիսաւորապէս յայտարարեց թէ՛ կատարեալ համաձայնութիւն կը տիրէ պետութեանց միջև. Աւելցուց նաև թէ՛ կառավարութիւնը հարկ եղած տրամադրութիւնները ձեռք առած է Եանկ-Չէ -Բեանկի հովանի մէջ զինուորներուն թիւը աւելցնելու համար:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

— 0 —

Տիար Ս. Գարաբըրանեան և Ս. Ս. բըրուտեան. — Ձեր 15 Յունիս թուակիրն ստացուած է: Ձեր նամակը հրատարակութեան տրուելու համար շատ մը օրինական թերութիւններ ունի իւր մէջ, որոնք դժբաղդաբար վերպած են Ձեր ուղղութիւնէն:

Հետեւաբար Ձեր գրութեան օրինական թերիներն լրացնելու և թերթին խմբագրութեան ալ հարկ եղած բացատրութիւնները տալու համար, հաճեցէք անգամ մը ժողովուրդային ՏՊԱՐԱՆը գալ, եւ Ձեր նամակը հրատարակելի ըլլալու վիճակի մը վերածել:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՍԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 10 columns of numbers: 7128 6174 1832 3860 2175 2264 5384 3550 7330 1448 1040 1637 9430 7135 9497 4071 1769 2139 3757 1628 8154 445 2565 4814 7112 353 9190

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ. Լեոն Եղիազարեանցին Բարիգի մէջ հրատարակած «Հայ ժողովրդական երգերու հաւաքածոյ» ի մասին, մեր անցեալ թուով ակնարկութիւն ըրած էինք:

1860 թուականին էր, որ անուանի հայ երաժիտչներ Զուխանեան, Թայնեան, Տօքսինի և ուրիշներ ընկերակցաբար «ԲՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ» անունով հայ երգերու վիմատիպ հրատարակութիւն մը ըրած են: սակայն անկէ ասդին այլ ևս այդպիսի օգտակար և կարեւոր հրատարակութեան մը ձեռնարկել ոչ ոք մտածած է մեր մէջ: Եւ Պ. Լեոն Եղիազարեանց տաղիւնը կ'ըլլայ մեր այդ պակասը լրացնելու ամենագոյնովին աշխատութեան ձեռնարկողը:

